



ՀԱՅ (ԱՐԼ ԱՐՄ)

← Այժմ արդեն
Արևմտահայերեն

РУС ENG ТҮР

Հայագիտությունը՝ գերակա ուղղություն ԵՊՀ-ում

20:06 • 24.01.11

«Մեր պայմաններում այսօր հայագիտության դերը չափազանց կարևորվում է», - այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը՝ նշելով, որ այս ոլորտում առկա են նաև թերացումներ ու բացթողումներ: Հայագիտության տեսանկյունից կովկասագիտությունը կաղում է, ինչը, ըստ Սիմոնյանի, բավականին մտահոգիչ է: 2012 թվականից ԵՊՀ պատմության ֆակուլտետում միջֆակուլտետային մակարդակով գործելու է կովկասագետ մասնագետների պատրաստում կոնկրետ մասնագիտությունների գծով, որոնք պետք է տիրապետեն ոչ միայն ժամանակակից վրացերենին ու ադրբեջաներենին, այլև հին վրացերենին, թուրքերենին, պարսկերենին, լատիներենին, նոր և հին հունարենին: «Կովկասագիտությունը մեզանում հետ է մնում կովկասագիտության այն զարգացումներից, որոնք տեղի են ունենում, օրինակ, Վրաստանում», - ասաց նա՝ ավելացնելով, որ եկել է ժամանակը՝ լրջորեն պատրաստելու ադրբեջանագետներ, քրդագետներ, վրացագետներ, դիչաղերենի իմացությամբ մասնագետներ: Հայ-քրդական հարաբերությունների ոլորտում, ըստ ԵՊՀ ռեկտորի, դարձյալ «հետ ենք մնացել»:

Ներկայումս Սանկտ Պետերբուրգի համալսարանում պատրաստվում են երեք օսմանագետներ, ինչը բավականին երկար ընթացք է պահանջում, քանի որ վերջիններս պետք է միաժամանակ տիրապետեն արաբերենի, թուրքերենի ու պարսկերենի: «Օսմաներենը մեզ համար կարևոր է, քանի որ թուրքական արխիվներում եղած փաստաթղթերը մինչև 1920-ականների կեսերը օսմաներեն են», - ասաց նա՝ ավելացնելով, որ օսմանագետ մասնագետներ գրեթե չունենք:

Սիմոնյանը տեղեկացրեց, որ ներկայումս մշակվում է հայագիտության զարգացման հայցակարգ, որը պատրաստ կլինի մի քանի օրից, իսկ ռազմավարական ծրագրի վրա հանձնաժողովը դեռ աշխատում է: Այն պատրաստ կլինի փետրվարի վերջին:

Աղբյուրը՝ Tert.am - <http://www.tert.am/am/news/2011/01/24/ysu/>